

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/4

21 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Արսեմ» ՍՊԸ գանգատը 01.01.2013 թ-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

«Արսեմ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Արսեմ» ՍՊԸ-ն 14.04.2014 թ-ին ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ-ից ստացել է Արձանագրություն թիվ 487: Համաձայն նշված կամերալ ուսումնասիրության «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համապատասխան ներկայացված հայտարարությամբ կազմակերպությունը հանդիսացել է ԱԱՀ վճարող 30.01.2013 թ-ից, սակայն մինչև այդ ամսաթիվը e-invoicing ծրագրի միջոցով դուրս է գրվել հարկային հաշիվներ:

«Արսեմ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 11.04.2012 թ-ին: Կազմակերպությունը զբաղվում է ներմուծմամբ և մեծածախ վաճառքով: Կազմակերպությունը ի սկզբանե (04.04.2012 թ-ից) իր դիմումի համաձայն ըստ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, համարվել է ԱԱՀ վճարող և նույն սկզբունքով շարունակում է աշխատել առ այսօր:

«Արսեմ» ՍՊԸ-ն թյուրիմացաբար թույլ է տվել սխալմունք, մասնավորապես՝ 2013 թ-ին ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ ուղարկված հայտարարությունում, որը հնարավոր չէ ճշգրտել, ԱԱՀ վճարող համարվելու ժամկետի սկիզբը նշել է 30.01.2013 թ-ը:

Կազմակերպության կողմից ուղարկված հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու սկիզբը պետք է նշվեր 01.01.2013 թ-ը, որի հիմնավորումը 01.01.2013 թ-ի դրությամբ կազմակերպության ունեցած ԱԱՀ-ի դեբետային մնացորդն է (5,469,348 ՀՀ դրամ), 2013 թ-ի 1-ին եռամսյակի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկը, ինչպես նաև նշված ժամանակահատվածում կազմակերպության կողմից դուրս գրված հարկային հաշիվները: Ուստի կազմակերպությունն իրեն փաստացի համարել է ԱԱՀ վճարող, իսկ նշված սխալմունքի մասին տեղեկացել է վերոնշյալ արձանագրությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ վարչապետի մոտ 03.02.2014 թ-ին կայացած ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի նիստի թիվ 23.6/186712-14 արձանագրության 4-րդ կետը, գանգատաբերը խնդրում է 2013 թ-ի ԱԱՀ վճարող համարվելու մասին ներկայացված հայտարարությունում նշված ժամկետը համարել 01.01.2013 թ-ը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Արսեմ» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, 31.01.2013 թ-ին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սակայն, հայտարարությունում թյուրիմացաբար ԱԱՀ վճարող համարվելու ժամկետի սկիզբը 01.01.2013 թ-ի փոխարեն նշվել է 30.01.2013 թ-ը:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, ըստ էության, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Արսեմ» ՍՊԸ գանգատով բերված պահանջը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Արսեմ» ՍՊԸ գանգատը՝ 01.01.2013 թ-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝

